ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՔԿԴ-17/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար էլեկտրատեխնիկա և կենցաղային սարքավորումների ապրանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.05.2017թ. ժամը 15-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Վ.Հարությունյանը, Ե.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:
Գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը բացակայում է:
Նիստը նախագահեց՝ Վ. Մկրտչյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՔԿԴ-17/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. <<Սեկոնետ>> ՍՊԸ (ք. Երևան, Ն. Զարյան 32)
2. <<Էտալոն-Լ>> ՍՊԸ (ք. Երևան, Տիգրան Մեծի փ. 32շ. բն. 3/1)
3. <<ԷԼԿՈՄՊ>>ՍՊԸ (ք. Երևան, Բաղրամյան 76/3)
4. <<ՍԵԳ>> ՍՊԸ (ք. Երևան, Սարկավագի փ. 72/2)
5. <<ԳՐԻՄԱՆ>> ՍՊԸ (ք. Երևան, Դավիթաշեն 3թղմ, 22-7)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 04.05.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. **<<Սեկոնետ>> ՍՊԸ,<<Էտալոն-Լ>> ՍՊԸ,<<ԷԼԿՈՄՊ>>ՍՊԸ,<<ՍԵԳ>>ՍՊԸ** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ՝ <<ԳՐԻՄԱՆ>> ՍՊԸ-ի: <<ԳՐԻՄԱՆ>> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը դատարկ է. ARMEPS համակարգում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **<<Սեկոնետ>> ՍՊԸ, <<Էտալոն-Լ>> ՍՊԸ, <<ԷԼԿՈՄՊ>>ՍՊԸ, <<ՍԵԳ>> ՍՊԸ** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/					
		Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	<<Սեկոնետ>> ՍՊԸ	<<Էտալոն-Լ>> ՍՊԸ*	<<ԷԼԿՈՄՊ>>ՍՊԸ	<<ՍԵԳ>> ՍՊԸ*
1	Անվտանգության տեսախցիկներ	11	198000	100833.34	121000	385000	198000
2	Սնուցման բլոկ	5	90000	62500	75000	108333	95000
3	Էլեկտրատեխնիկական սարքեր	5	250000	254166.67	332500	370833	245000
4	Անվտանգության տեսախցիկներ	5	100000	66666.67	75000	233333	95000

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների համար **<<Սեկոնետ>> ՍՊԸ**-ին,
3-րդ չափաբաժնի համար **<<ՍԵԳ>> ՍՊԸ** -ին,

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1-ին, 2-րդ, 4-րդ չափաբաժինների համար **<<Էտալոն-Լ>> ՍՊԸ -ին,**

Մնացած մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները 3-րդ չափաբաժնի մասով գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին,
ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1.Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Նիստը նախագահեց _____ Վ.Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Վ.Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան